ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1-Ա

<< 17 >> հունվարի 2020 թվական գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանին՝ **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավար՝ Վարդան Մակեյան)

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխությունները և լրացումներ կատարելու մասին:

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավար՝ Վարդան Մակեյան)

3. Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից համայնքներին տրամադրվող սուբվենցիա ստանալու համար հայտեր ներկայացնելուն համաձայնություն տալու մասին:

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավար՝ Վարդան Մակեյան)

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկ համայնքի վարչական սահմաններում գտնվող 08-113-0071- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 0.085036 հեկտար

հողամասը համայնքի սեփականություն ճանաչելու և հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին:

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավար՝ Վարդան Մակեյան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ՄԻՀՐԱՆ ԲՈՅԱՋՅԱՆ՝ կողմ ----------

ՏԻԳՐԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ կողմ ----------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ կողմ ----------

ՍԵՐՅՈԺԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ՝ կողմ ----------

ՀԱՄԱԶԱՍՊ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ԱՄԲԱԿՈՒՄ ՍԵՐՈԲՅԱՆ՝ կողմ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

<< 17 >> հունվարի 2020 թվական
Փանիկի համայնք գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 2 -Ն

«17» հունվարի 2020 թվական գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ և 9-րդ և 10-րդ մասերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանին՝ **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1, N 2 և N 3 հավելվածների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ՄԻՀՐԱՆ ԲՈՅԱՋՅԱՆ՝ կողմ ----------

ՏԻԳՐԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ կողմ ----------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ կողմ ----------

ՍԵՐՅՈԺԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ՝ կողմ ----------

ՀԱՄԱԶԱՍՊ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ԱՄԲԱԿՈՒՄ ՍԵՐՈԲՅԱՆ՝ կողմ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

<< 17 >> հունվարի 2020 թվական
Փանիկի համայնք գյուղ Փանիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17 -Ի
ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՎ

Հազար դրամ

h/h	Եկամտատեսակները	2019թ.				2018թ.			
		Նախատեսված	Ճշտված	Փաստացի կատարված	Կատարման տոկոս	Նախատեսված	Ճշտված	Փաստացի կատարված	Կատարման տոկոս
1.	Հողի հարկ	**4962.3**	**4962.3**	**5003.3**	**100.8**	4930,0	4930,0	4960,3	100,6
2.	Գույքահարկ	**8989.9**	**8989.9**	**9060.9**	**100.8**	7236,0	7236,0	7412,2	102,6
3.	Տեղական տուրք	**812.0**	**773.0**	**849.5**	**109.9**	840,0	840,0	838,5	99,8
4.	Հողի վարձավճար	**1882.5**	**1882.5**	**1903.5**	**101.1**	1882,5	1882,5	1892,0	100,5
5.	Աղբահանության վճարներ	**1100.0**	**1100.0**	**1412.0**	**128.3**	950,0	950,0	787,6	82,9
6.	Նախադպրոցական հաստատության ծնող.վճար	**1512.0**	**1512.0**	**1612.0**	**106.6**	1620,0	1554,0	1554,0	100,0
7.	Արվեստի դպրոցի ծնողական վճարներ	**1080.0**	**1080.0**	**1080.0**	**100.0**	1080,0	1080,0	1080,0	100,0
8.	Այլ մուտքեր /վարչական իրավախախտումներ/	0	0	**104. 8**	**104.8**	0	0	0	0
	Ընդամենը սեփական եկամուտներ	***20338.7***	***20299.7***	***21026.0***	***103.6***	***18538,5***	***18472,5***	***18524,6***	***100,3***
9.	Դոտացիա	59803,6	59803,6	59803,6	**100.0**	56416,0	56416,0	56416,0	100,0
10.	Պետության կողմից տրամադրվող կապիտալ ծախս	14466,0	14466,0	14466,0	**100.0**	0	0	0	0
11.	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	0	0	-1282.9		0	0	0	0
	ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ	**94608.3**	**94569.3**	**94012.7**	**99.4**	**74954,5**	**74888,5**	**74940,6**	**100,1**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17 -Ի
ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՎ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Հազար դրամ

բաժին	խումբ	դաս	Անվանումը	2019 թ.				2018 թ.			
				Նախատեսված	Ճշտված	Փաստացի կատարված	Կատ. %	Նախատեսված	Ճշտված	Փաստացի կատարված	Կատ. %
01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ	35325.4	27906.4	26058.1	93.3	25 362,6	28 590,6	27 227,1	95,2
01	3	3	Ընդհանուր բնույթի ծառայություններ	670.0	664.0	570.1	85.8	670,0	1180,0	997,0	84,5
01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/	350.0	350.0	82.0	23.4	200,0	200,0	81,8	40,9
04	2	1	Գյուղատնտեսություն	740.0	1357.6	1173.2	86.4	640,0	943,5	790,0	83,7
04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	4600.0	12647.0	11813.1	93.4	2400,0	3034,0	2767,6	91,2
04	9	1	Տնտեսական հարաբերություններ/այլ դասերին չպատկանող/	0	0	0	0	0	-2620,0	-2730,0	
05	1	1	Աղբահանում	1200.0	1325.0	1316.3	99.3	950,0	950,0	910,1	95,8
06	3	1	Ջրամատակարարում	1800.0	1800.0	1795.2	99.7	1800,0	1800,0	1795,2	99,7
06	4	1	Փողոցների լուսավորում	1800.0	2200.0	2142.4	97.4	1800,0	1950,0	1915,0	98,2
08	1	1	Հանգիստ և սպորտի ծառայություն	700.0	700.0	693.0	99.0	400,0	400,0	40,0	10,0
08	2	4	Այլ մշակույթային կազմակերպություններ	1600.0	1600.0	1581.6	98.8	1400,0	2100,0	1787,9	85,1
09	1	1	Նախադպրոցական կրթություն	19050.0	36394.0	34448.0	94.6	17800,0	17800,0	17000,0	95,5
09	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն	250.0	250.0	0	0	200,0	100,0	0	0
09	4	1	Բարձրագույն կրթություն	800.0	800.0	510.0	63.7	650,0	650,0	510,0	78,4
09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	9500.0	9500.0	9500.0	100.0	9200,0	9200,0	9200,0	100,0
09	6	1	Կրթությանը տրամադրվող օժ. ծառ.	300.0	300.0	294.7	98.2	150,0	250,0	198,0	79,2
10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ	1800.0	2000.0	1606.0	89.2	1500,0	2000,0	1950,0	97,5
11	1	2	Պահուստային ֆոնդ	10512.3	5630.7	0	0	10174,5	6703,0	0	
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**90997.7**	105424.7	**93583.7**	**88.9**	**75 297,1**	75 231,1	**64 439,7**	**85,6**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17 -Ի
ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ՝ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՎ, ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Հազար դրամ

Հոդվածների անվանումը	հոդված	2019 թ.				2018 թ.			
		Նախատեսված	Ճշտված	Փաստացի կատարված	Կատ. %	Նախատեսված	Ճշտված	Փաստացի կատարված	Կատ. %
Աշխատավարձ	4111	17000.0	17000.0	16704.0	98.2	17000,0	16750,0	16204,8	96,7
Պարգևատրումներ	4112	1500.0	1500.0	1500.0	100.0	1500,0	1550,0	1518,5	97,9
Էներգետիկ ծառայություններ	4212	1900.0	1900.0	1893.8	99.7	1900,0	1577,0	1410,2	89,4
Կոմունալ ծառայություններ	4213	2200.0	2375.0	1976.3	83.2	1750,0	1690,0	1371,4	81,1
Կապի ծառայություն	4214	500.0	464.0	402.5	86.7	500,0	500,0	372,4	74,5
Ապահովագրական ծախսեր	4215	60.0	46.0	46.0	100.0	60,0	60,0	48,0	80,0
Գործուղման ծախսեր	4221	400.0	265.0	151.6	57.2	400,0	400,0	172,0	43,0
Արտասահմանյան գործուղման ծախսեր	4222	600.0	600.0	0	0	0	0	0	0
Համակարգչային ծառայություններ	4232	300.0	250.0	169.2	67.7	300,0	300,0	172,8	57,6
Տեղեկատվական ծառայություններ	4234	250.0	105.0	68.0	64.8	250,0	250,0	239,7	95,9
Կառավարչական ծախսեր	4235	140.0	64.0	0	0	140,0	110,0	32,5	29,5
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	2200.0	2350.0	2309.1	98.2	1550,0	2581,0	2193,0	85,0
Մասնագիտական ծառայություններ	4241	470.0	620.0	489.4	78.9	470,0	709,0	572,1	80,7
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	4251	5250.0	6480.0	6003.1	92.6	5050,0	6024,0	5844,6	97,0
Մեքենաների և սարքավորումների ընթ. նորոգում	4252	950.0	950.0	672.5	70.8	800,0	600,0	532,5	88,7
Գրասենյակային հագուստներ և նյութեր	4261	400.0	300.0	207.5	69.2	200,0	250,0	249,5	99,8
Գյուղատնտեսական ապրանքներ	4262	600.0	500.0	400.0	80.0	500,0	500,0	500,0	100,0
Տրանսպորտային նյութեր	4264	1900.0	2017.6	1908.9	94.6	1600,0	2231,5	2198,7	98,5
Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1260.0	1080.0	995.1	92.1	1260,0	2112,0	1920,5	90,9

Սուբսիդիա	4511	28550.0	29150.0	27600.0	94.7	27000,0	27000,0	26200,0	97,0
Այլ նպաստներ բյուջեից	4729	2850.0	3050.0	2116.0	69.4	2350,0	2750,0	2460,0	89,5
Նվիրատվություն	4819	350.0	350.0	82.0	23.4	200,0	200,0	81,8	40,9
Պարտադիր վճարներ	4823	0	56.0	43.2	77.1	0	41,0	41,0	100,0
Պահուստային միջոցներ	4891	10512.3	5630.7	0	0	10174,5	6703,0	0	
ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ		**80142.3**	**77103.3**	**65738.2**	**85.2**	**74954,5**	**74888,5**	**64336**	**85,9**
Շենքերի և շինությունների կառուցում	5112	0	16744,0	16348,0	97.6	0	0	0	0
Շենքերի և կառույցների կապիտալ վերանորոգում	5113	10000.0	10722.0	10686,6	99.7	342,6	2253,1	2220,4	98,5
Վարչական սարքավորումներ	5122	355.4	475.4	445.5	93.7	0	126,0	126,0	100,0
Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	500.0	380.0	364.7	96.0	0	583,5	487,5	83,5
ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ		**10855,4**	**28321,4**	**27844,8**	**98.3**	**342.6**	**2962.6**	**2833.9**	**95.6**
Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	8411	0	0	0	0	0	-2620,0	-2730,0	0
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		90997,7	105424,7	93583,0	**88.9**	**75297,1**	**75231,1**	**64439,7**	**85,6**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 3 -Ն

«17» հունվարի 2020 թվական գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 33-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 33-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.Եկամտային մաս

1) Որոշման 2-րդ տողում նշված «Գույքահարկ փոխադրամիջոցների համար» տողի <<9285,9>> թիվը փոխարինել <<11024,1>> թվով:
2) «Ընդամենը եկամուտներ» տողի <<86774,4>> թիվը փոխարինել <<88512,6>> թվով:

2.Տարեսկզբի ազատ մնացորդ

1) Համայնքի 2019 թվականի բյուջեի միջոցների տարեսկզբի մնացորդը լրացնել «11284,5» թվով, այդ թվում՝
   ա) վարչական մասի մնացորդը լրացնել «10807,9» թվով,
   բ) ֆոնդային մասի մնացորդը՝ «476,6» թվով,
   գ) 2019 թվականի համայնքի բյուջեի վարչական մասի 10807,9 հազար դրամ մնացորդը ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս,
   դ) ֆոնդային բյուջեն լրացնել «11284,5» թվով:

3.Ծախսային մաս

1) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) ծրագրի և տնտեսագիտական դասակարգման (պահուստային միջոցներ) 4891 հոդվածի <<10044,4>> թիվը փոխարինել <<11782,6>> թվով:
2) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 1, դաս 1 (օրենսդիր և գործադիր մարմիններ) ծրագրի <<28770,0>> թիվը փոխարինել <<39054,5>> թվով, գործառնական դասակարգման բաժին 04, խումբ 5, դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) ծրագրի <<2300,0>> թիվը փոխարինել <<3300,0>> թվով, և ծախսերի տնտեսագիտական դասակարգման (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) 5113 հոդվածի <<0,0>> թիվը փոխարինել <<11284,5>> թվով,

3) Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման «Ընդամենը վարչական ծախսեր» տողի <<86774,4>> թիվը փոխարինել <<88512,6>> թվով,

4) Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման «Ընդամենը ֆոնդային ծախսեր» տողի <<0.0>> թիվը փոխարինել <<11284,4>> թվով,

5) Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման «Ընդամենը ծախսեր» տողի «Ընդամենը» սյունակի <<86774,4>> թիվը փոխարինել <<99797,1>> թվով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Չեռնպահ՝ 0

ՄԻՀՐԱՆ ԲՈՅԱՋՅԱՆ՝ կողմ ----------

ՏԻԳՐԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ կողմ ----------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ կողմ ----------

ՄԵՐՅՈՒԺԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ՝ կողմ ----------

ՀԱՄԱԶԱՍՊ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ԱՄԲԱԿՈՒՄ ՍԵՐՈԲՅԱՆ՝ կողմ ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

<< 17 >> հունվարի 2020 թվական
Փանիկի համայնք, գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 4-Ա

«17» հունվարի 2020 թվական գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանին՝ **որոշում է.**

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից համայնքներին տրամադրվող սուբվենցիա ստանալու համար համայնքի առաջնահերթ խնդիրների լուծման նպատակով մշակելու և ներկայացնելու երկու սուբվենցիայի ծրագրերի փաթեթ:

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքապետարանի շենքի ներքին վերանորոգման, ջեռուցման համակարգի անցկացման, տանիքի վերանորոգման և արևային ֆոտովոլտային 15 կիլովատ հզորությամբ համակարգի կառուցման աշխատանքների ծրագրի հայտ:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Փանիկի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի ներքին վերանորոգման աշխատանքների ծրագրի հայտ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ՄԻՀՐԱՆ ԲՈՅԱՋՅԱՆ՝ կողմ ----------

ՏԻԳՐԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ կողմ ----------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ կողմ ----------

ՍԵՐՅՈԺԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ՝ կողմ ----------

ՀԱՄԱԶԱՍՊ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ԱՄԲԱԿՈՒՄ ՍԵՐՈԲՅԱՆ՝ կողմ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

<< 17 >> հունվարի 2020 թվական
Փանիկի համայնք, գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 5 -Ա

«17» հունվարի 2020 թվական գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-113-0071- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ 0.085036 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի N 186-Ն հրամանով հաստատված «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգի» 9-րդ կետի 5-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշմամբ հաստատված «Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի» 2-րդ և 10-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով, որ համայնքի վարչական սահմաններում 08-113-0071- կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող մշակույթի տան (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի «Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին» N 51 որոշման N 7 հավելված) պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.085036 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և թույլ տրված անճշտության հետևանքով այն համայնքին է փոխանցվել որպես «անահայտ» քաղաքացու սեփականություն, անճշտությունը ուղղելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկ համայնքի ավագանին՝ որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկ համայնքի վարչական սահմաններում 08-113-0071- կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող մշակույթի տան շենքի պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.085036 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (հասցե՝ Փանիկ համայնք, 2-րդ փողոց, թիվ 51) ճանաչել համայնքի սեփականություն:

2. Համայնքի ղեկավար՝ Վարդան Մակեյանին.

ա) Մշակույթի տան շենքի և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողմասի նպատակային և գործառնական նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու նպատակով, սույն որոշման 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկ համայնքի վարչական սահմաններում գտնվող և համայնքի սեփականությունը ճանաչված 08-113-0071- կադաստրային ծածկագրով 0.085036 հեկտար հողամասի (հասցե՝ Փանիկ համայնք, 2-րդ փողոց, թիվ 51) գործառնական նշանակությունը փոխել և այն ընդգրկել հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն հողերի կազմում:

բ) Հողամասի գործառնական նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

գ) Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանում հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելու համար:

2. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ՄԻՀՐԱՆ ԲՈՅԱՋՅԱՆ՝ կողմ----------

ՏԻԳՐԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝ կողմ----------

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ կողմ----------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ կողմ----------

ՍԵՐՅՈԺԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ՝ կողմ----------

ՀԱՄԱԶԱՍՊ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ՝ կողմ----------

ԱՄԲԱԿՈՒՄ ՍԵՐՈԲՅԱՆ՝ կողմ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

<< 17 >> հունվարի 2020 թվական
Փանիկի համայնք, գյուղ Փանիկ